**Ամփոփ նյութ**

**«ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՈՐՈՇՈՒՄ**

10/07/2020 N 1/388Ա

**«ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումները թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել **տուգանք՝ 100.000 ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև նախազգուշացում՝ ապագայում նման խախտումները կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերություն մուտքագրվելու կամ Ընկերության՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ** **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**